— Յունաց կողմ կ'երթամ:

— Որ կողմեն:

— Մուշի վրայեն:

— Շատ բարի, միատեղ կ'երթանք ուրեմն: Ելնենք ճամփայ:

— Հիմա՞, աստուած պահէ. մենք տասը ժամ է, որ ձիու վրայ ենք: Դու որ դռներ բանալ գիտես մեզ քիչ մը ուտելիք, քիչ մը կրակ եւ հանգստեան խշտի պէտք է ճարես:

— Իմացայ,— ըսաւ Յովնան, եւ դառնալով,— տղա՛ք, այս գիշեր հանդչինք եւ վաղը ճամփայ կ'ելնենք. կալանաւորները վար առէք եւ ներս բերէք:

Սուտ մը սենեակը մաքրեցին, կրակը փայլեցուցին, եւ Գուրգէն ու Խոսրով իրար բարեւեցին: Յովնան դուրս ելաւ ոչ միայն կերակուր հոգալու իւր նոր հիւրերուն՝ այլ նաեւ կալանաւորներուն վիճակը տեսնելու, որպէսզի յանկարծակի հրաշք մը իրենց փախուստի դուռ չի բանայ: Վերջապէս, ամէն բան ապահովելեն եւ կարգի դնելեն ետքը երկու իշխանաց քով եկաւ նստաւ:

— Եղբա՛յր, դու կալանաւորներու խօսք ըրիր, Խոսրով իշխանի երբ հարցնեմ՝ կը ծիծաղի եւ կըսէ թէ Յովնանու վերաբերեալ խնդիր մ’է, նա միայն կրնայ պատասխանը տալ: Կ'երեւի թէ քանի մը արաբ աւազակներ բռնէր կապեր են, այդ անպիտանները կապել մեղք է, առշի հանդիպած ծառեն պէտք է կախել:

— Եթէ այդպիսի սովորական աւազակներ լինէին, այնպէս կ'ընէի եւ ժամանակ չէի կորսնցնէր, ինչպէս շատերուն ըրի. բայց սոքա հայ իշխաններ են, եւ ես ուրախ եմ, որ դատաւոր մը աւելի ձեռք թերի:

— Յայտնի խոսէ, Յովնան, դու միտքդ լաւ գիտես բացատրել: